ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդում

Իրականացման ժամանակահատված: 25.06.2020 - 24.08.2022

ԱԼԳ երկրներ:

Armenia

Իրականացնող կազմակերպություն(ներ):

DEUTSCHE STIFTUNG FUR INTERNATIONALE RECHTLICHE ZUSAMMENARBEIT IRZ-STIFTUNG, CORPORATE & PUBLIC MANAGEMENT CONSULTING

Նախագծի նկարագրություն:

ՀՀ կառավարությունը բազմիցս է վերահաստատել ժողովրդավարական արժեքների և իրավունքի գերակայության նկատմամբ իր հանձնառությունը՝ ընդգծելով դատական և իրավական իրական բարեփոխումների անհրաժեշտությունը: Հայաստանի կողմից Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ստանձնած հանձնառությունը լրացուցիչ ուժ է հաղորդել դատական ոլորտի բարելավմանն ուղղված քաղաքական ջանքերին:

Սույն ծրագրի ընդհանուր նպատակը արդարադատության որակի բարձրացումն է: Ծրագրի միջոցով կբարելավվի արդարադատության համակարգը բավարարելու համար անկախության, արդյունավետության, ամբողջականության, հաշվետվողականության և թափանցիկության որակի պահանջները ՀԸԳՀ-ի և ԵՄ-ի լավագույն փորձի առաջնահերթություններին համապատասխան:

Գործողությունը դրական ազդեցություն կունենա իրականացվող արդարադատության որակի վրա: Արդարադատության որակը կբարելավվի համապարփակ օրենսդրությամբ, հզորացված կարողություններով և լիարժեք գործունակ, քաղաքացիներին միտված ենթակառուցվածքներով՝ առաջարկելով իրավունքների և հանրային շահերի առավել պաշտպանություն: Դա էլ իր հերթին կնպաստի համակարգում հանրային վստահության բարձրացմանը:

Ակնկալվող արդյունքներ:

Ակնկալվող արդյունքները ներառում են՝

Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը թարմացվում և իրականացվում է ԵՄ չափանիշներին և լավագույն պրակտիկային համապատասխան,

Ֆունկցիոնալ դատական համակարգը համապատասխանում է անկախության, արդյունավետության, ամբողջականության, հաշվետվողականության և թափանցիկության չափանիշներին,

Դատավորների բարելավված բարեվարքություն և կարողություններ, մոտիվացված և հմուտ դատական անձնակազմ,

Դատարանի գնահատման, ինչպես նաև կատարողականի գնահատման համապարփակ համակարգ, իրավասու շահագրգիռ կողմեր, որոնք ունակ են բացահայտել կատարողականների և դատական ծառայության բարելավման ձևերը և իրականացնել դրանք: